« 06 » հոկտեմբեր 2026թ. No 5735 - Ա

«ԱԼԵՐԳԻԱ, ԻՄՈՒՆԻՏԵՏ ԵՎ ԻՄՈՒՆՈԹԵՐԱՊԻԱ 2026. ԱԽՏՈՐՈՇՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ՍԻՄՊՈԶԻՈՒՄԻ

Հոկտեմբերի 7-8-ը, 2026թ., ք. Երևան (Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ կոնֆերանս դահլիճ)

Մանկական բժիշկների հայկական ասոցիացիա (ՄԲՀԱ),

Արաբկիր ԲՀ-ԵԴԱԻ

- Թիրախային լսարան՝ ալերգոլոգներ և կլինիկական իմունոլոգներ, մանկական ալերգոլոգներ և կլինիկական իմունոլոգներ, մանկաբույժներ, ընտանեկան բժիշկներ, թերապևտներ, թոքաբաններ, մանկական թոքաբաններ, քիթ-կոկորդ-կանջաբաններ, մանկական քիթ-կոկորդ-ականջաբաններ, մաշկասեռավարակաբաններ, մանկական մաշկասեռավարակաբաններ, անհետաձգելի օգնության բժիշկներ, մանկական անհետաձգելի օգնության բժիշկներ, կլինիկական լաբորատոր ախտորոշման մասնագետներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 150-170 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 6 տեսական կրեդիտ
- Կոնտակտ +37433369797

Օր 1՝ հոկտեմբերի 7		
15:00-15:05	Բացում և ողջույնի խոսք Եռօրյա գիտական ծրագրի բացում և ներկայացում	պրոֆ., Արա Բաբլոյան / դոկտոր Աստղիկ Բաղդասարյան
15:05-16:05	Ալերգիկ հիվանդությունների արդի ախտորոշումն ու բուժումը: Ալերգիկ հիվանդությունների ժամանակակից ախտորոշումն ու վարումը, կլինիկապես նշանակալի սենսիբիլիզացիան, արդի ախտորոշիչ մոտեցումները, բուժման ռազմավարությունները և հիվանդության ընթացքը փոփոխող մոտեցումները	պրոֆ. Խորխե Մասպերո
16:05-16:35	Արդի գիտական դասախոսություն 2-րդ տիպի բորբոքումը ալերգիկ հիվանդություններում. մեխանիզմներից մինչև անհատականացված բուժում 2-րդ տիպի բորբոքման ուղիներ և կենսամարկերներ. ավանդական թերապիայի, ալերգենային իմունոթերապիայի և կենսաբանական բուժման տեղը անհատականացված բուժման շրջանակում	պրոֆ. Խորխե Մասպերո

16:35-16:40	Ընդմիջում	
16:40-17:35	Ալերգիայի ախտորոշումը առօրյա պրակտիկայում. կլինիկական պատմությունից մինչև նշանակալի ալերգեն: Երբ հետազոտել. մաշկային պրիկ-թեստավորում (SPT) և սպեցիֆիկ IgE, պանելների ընտրություն, կլինիկապես նշանակալի և պատահական սենսիբիլիզացիա, պոլիսենսիբիլիզացիա, մեկնաբանման սխալներ և ալերգենի ընտրություն	պրոֆ. Խորխե Մասպերո
17:35-18:00	Ինտերակտիվ կլինիկական դեպքերի քննարկում: Բարդ ալերգոլոգիական ախտորոշիչ դեպքեր. Դուք ի՞նչ կանեիք: Լսարանի հետ կլինիկական դեպքերի քննարկում և հարցուպատասխան՝ ներառյալ շնչառական ալերգեններ, տիզեր, ծաղկափոշիներ, բորբոսասնկեր և ախտորոշիչ վերահսկիչներ	պրոֆ. Խորխե Մասպերո
Օր 2՝ հոկտեմբերի 8		
15:00-15:05	Նախաբան: Շնչառական վարակները՝ որպես քրոնիկ շնչառական հիվանդության սրացումներ հրահրող և ընթացքը փոփոխող գործոններ	
15:05-16:00	Վարժեցված իմունիտետը և երեխաների սուլող շնչառության ու թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության սրացումների կանխարգելումը (Bactek adventure): Վարժեցված իմունիտետի գիտական հիմքերը, վարակի հետ կապված սուլող շնչառությունն ու սրացումները, բակտերիալ իմունոմոդուլյացիայի հիմնավորումն ու ապացույցները, հիվանդների ընտրությունը և Bactek-ի կիրառման փորձը:	պրոֆ. Խորխե Մասպերո
16:00-16:35	Կլինիկական դասախոսություն Կրկնվող շնչառական վարակներ և սուլող շնչառություն. ո՞ր հիվանդին է անհրաժեշտ ավելին, քան ստանդարտ բուժումը Նորմալ և չափազանց հաճախակի շնչառական վարակներ, կրկնվող վիրուսային հիվանդություններ, վարակի հետ կապված սուլող շնչառություն, ասթմա, երբ մտածել իմունային համակարգի խանգարման մասին, ռացիոնալ հետազոտում և կանխարգելում	պրոֆ. Խորխե Մասպերո
16:35-16:40	Ընդմիջում	
16:40-17:35	Վարժեցված իմունիտետից մինչև կլինիկական պրակտիկա. հիվանդների ընտրություն իմունային կանխարգելման համար: Կլինիկական դեպքեր՝ կրկնվող շնչառական դրվագներով կամ սուլող շնչառությամբ երեխաների և ԹՔՕՀ-ի հաճախակի սրացումներով մեծահասակների մոտ, ներառյալ այն իրավիճակները, երբ բակտերիալ իմունոմոդուլյացիան նպատակահարմար է կամ նպատակահարմար չէ	պրոֆ. Խորխե Մասպերո
17:35-18:00	Փորձագիտական քննարկում և հարցուպատասխան: Ի՞նչ կարող ենք իրականում կանխարգելել: Վարակների կանխարգելում, սուլող շնչառություն, սրացումներ, պատվաստում, իմունոմոդուլյացիա, ապացույցների բացեր և ապագա հետազոտություններ	պրոֆ. Խորխե Մասպերո